ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

10 հունիսի 2014 թվականի N 732-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-246-Ն) 7.2.1-ին ենթաբաժինը, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետը և ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 4-ի N 27 արձանագրային որոշմամբ հաստատված «Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագրի» ժամանակացույցի 1.2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգով ուսումնառության օրինակելի կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյան

Հավելված
ՀՀ կրթության և
գիտության նախարարի
2014 թվականի հուլիսի 10-ի
N 732-Ա/Ք հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրինակելի կարգը (այսուհետ՝ կարգ) կարգավորում է նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպման գործընթացի հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգում ներառված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին հասկացություններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:
3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները.

1) Կարողություն՝ գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է:

2) Ուսումնառության արդյունքները նկարագրում են, թե ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողն ուսումնառության գործընթացը կամ մեկ առանձին մոդուլը ավարտելիս, որոնք էլ սահմանվում են հետևյալ եզրույթներով՝ գիտելիք, հմտություններ և կարողություններ: Ուսումնառության արդյունքը և կրեդիտի գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

3) Ուսումնառության արդյունքների մոդուլ՝ որակավորման բաղադրիչի մաս, որը բաղկացած է գիտելիքի, հմտությունների ու կարողությունների կապակցված շարքից և կարող է գնահատվել ու վավերացվել,

4) Ուսումնառության արդյունքների կրեդիտ՝ անհատի ուսումնառության արդյունքների շարք, որոնք գնահատվել են և կարող են կուտակվել զուգահեռ կամ տեղափոխվել ուսումնառության այլ ծրագրեր,

5) Ուսումնառության արդյունքների գնահատում՝ մեթոդներ և գործընթացներ, որոնք կիրառվում են հաստատելու, թե

իրականում ուսումնառուն ինչ չափով է ձեռք բերել որոշակի գիտելիք, հմտություններ և կարողություններ:

6) Ուսումնառության արդյունքների վավերացում՝ գործընթաց, որը հաստատում է այն մասին, որ ուսումնառուի կողմից նախկինում ձեռք բերված ուսումնառության գնահատված արդյունքները համապատասխանում են տվյալ մոդուլի կամ որակավորման համար պահանջվող որոշակի արդյունքներին,

7) Ուսումնառության արդյունքների ճանաչում՝ մոդուլների կամ որակավորումների շնորհման միջոցով ուսումնառության ձեռք բերված արդյունքների պաշտոնապես հաստատման գործընթաց,

8) Որակավորում՝ գնահատման և վավերացման գործընթացի ֆորմալ արդյունք, որը ձեռք է բերվում, երբ իրավասու հաստատությունը վճռում է, որ անհատը ձեռք է բերել տվյալ չափորոշիչներին համապատասխան ուսումնառության արդյունքներ,

9) Կրեդիտը՝ դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բելելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

10) Կրեդիտի կարևորագույն հատկանիշները.

ա) կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

բ) կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

գ) կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,

դ) կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

ե) կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

զ) կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը. որակը չափվում է գնահատականներով:

11) Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման) , կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

12) Կրեդիտների փոխանցման և կուտակման ECVET համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում կազմում է 60 ECVET կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական մասնագիտական կրթական տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և ուսումնական հաստատությունների միջև փոխանցումը դյուրացնելու համար:

13) Կրեդիտային համակարգի կարևորագույն հատկանիշները.

ա) կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

բ) կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն:

14) Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները.

ա) ուսուցման կրեդիտային համակարգին անցնող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները պետք է իրականացնեն համապատասխան ծրագրային և կազմակերպական վերափոխումներ,

բ) կրեդիտների կուտակում, ինչը ուսանողին տալիս է դասախոսի, դասընթացների և դրանց յուրացման կիսամյակների ընտրության հնարավորություն և ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն,

գ) կրեդիտների փոխանցում, ինչը ենթադրում է ուսումնական ծրագրի բոլոր բաղկացուցիչների աշխատածավալների կրեդիտների օգնությամբ արժևորում և տարբեր ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի միջև այդ կրեդիտների փոխանցման հնարավորություն ուսումնառության արդյունքների համապատասխանության դեպքում:

15) Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի հատկանիշները.

ա) կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի ուսումնական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

բ) կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին,

կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն:

գ) նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և/կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները փոխանցելի են բարձրագույն ուսումնական հաստատություններ, եթե դրանց կրթական վերջնարդյունքները համադրելի են,

դ) նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններում ստացված կրեդիտները փոխանցելի են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց ուսումնառության (կրթական) արդյունքները համարժեք են,

16) Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշները.

ա) ուսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով,

բ) ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,

գ) դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ կախված դասընթացի իրականացման ժամանակացույցից և դասախոսի նախապատվությունից:

17) Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշները.

ա) մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալներն արտահայտված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող կրեդիտներով,

բ) կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն հաստատության ներսում, տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

գ) կրեդիտների փոխանցման գործառույթը պահանջում է միայն ծրագրային վերափոխումներ, իսկ կրեդիտների կուտակման գործառույթը՝ նաև ուսումնառության կազմակերպման գործընթացի համապատասխան վերակառուցում՝ պահանջվող ընթացակարգերի ապահովման նպատակով:

2. ՄԿՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՎԱԼԸ

4. ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը կազմում է 60 կրեդիտ, որն էլ համարժեք է տարեկան 1800 ակադեմիական ժամ բեռնվածությանը՝ ներառյալ ուսումնառողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն բեռնվածությունը:

5. Մեկ կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ակադեմիական ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային, ինքնուրույն և պրակտիկա) ուսումնական բեռնվածությանը:

6. Ուսումնական տարվա տևողությունը 52 շաբաթ է: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:

7. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

8. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

9. Ուսումնական ծրագրում (պլանում) և դասընթացների նկարագրերում (առարկայական ծրագրերում) դասընթացին հատկացված կրեդիտների հետ մեկտեղ նշվում է նաև շաբաթական լսարանային ժամաքանակն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ և այլն):

3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ, ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

10. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:

11. Դասընթացը մշակող ուսումնական ստորաբաժանումը այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:

12. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

13. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամ ընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

14. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և դասընթացների ընտրությունը (այդ թվում նաև այլ կրթական ծրագրերից) դյուրացնելու նպատակով:

4. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

15. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի իրականացմամբ կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

16. Ուսանողների վերջնարդյունքների գնահատման համակարգը պետք է ունենա գնահատման և նշագրման հստակ և հրապարակված չափանիշներ:

17. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա առանց դժվարության հաշվարկելու կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորները՝ միևնույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:

18. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկելու ուսանողի միջին որակական գնահատականը կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման համար:

19. Գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրումով տարբերակված գնահատականներով, այնպես էլ «ստուգված» և/կամ «չստուգված» սկզբունքով:

20. Գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (ստուգարք կամ տարբերակված գնահատում) անկախ բոլոր տեսակի գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ:

21. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

1) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում՝ դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

2) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

3) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

4) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

22. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

1) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,

2) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:

23. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

24. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ամբիոնները և ուսումնական աշխատանքների գծով պատասխանատուի ներկայացմամբ հաստատվում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ղեկավարի կողմից:

5. ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

25. Ակադեմիական տեղեկագիրն օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունն ուսման որոշակի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար՝ ուսումնասիրած դասընթացների և կրթական մոդուլների, շնորհված կրեդիտների և ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

26. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական

հաստատության համապատասխան ուսումնական ստորաբաժանումը յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից սկսած վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի վաստակած կրեդիտները և գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների:

27. Ուսանողի ստացած կրեդիտը ներառվում է նրա ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ է նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

28. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունը ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

ա) գումարային կրեդիտների քանակը,

բ) գնահատված կրեդիտների քանակը,

գ) վարկանիշային միավորները,

դ) միջին որակական գնահատականը:

29. Գումարային կրեդիտը կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

30. Գնահատված կրեդիտը գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով:

31. Վարկանիշային միավորը բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

32. Միջին որակական գնահատականը գնահատականների կրեդիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ):

33. Տարբերակում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և ամփոփիչ (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորներ և միջին որակական գնահատականներ:

34. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը պարտավոր է ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

35. Մասնագիտության ուսումնական ծրագիրը (պլանը) ներկայացվում է համապատասխան կրթամասերում խմբավորված պարտադիր և ընտրովի (եթե այդպիսիք նախատեսված են) դասընթացների ցանկով: Կրթամասերի քանակը և անվանումները սահմանում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը:

36. Յուրաքանչյուր դասընթացի (կրթական մոդուլի) համար նշվում է նրա եզակի նույնացման թվանիշը (դասիչը), լրիվ անվանումը, հատկացված կրեդիտների քանակը, պարապմունքի իրականացման ձևը, կիսամյակի համարը (ամրագրված ուսումնական պլանի դեպքում) կամ անվանումը (աշնանային/գարնանային՝ ճկուն ուսումնական ծրագրի դեպքում), դասընթացի նախապայմանը (եթե այդպիսին կա) և գնահատման ձևը:

37. Կրթական ծրագրի ավարտական պահանջներում նշվում է համապատասխան որակավորում շնորհելու համար անհրաժեշտ կրեդիտների ընդհանուր քանակը (այդ թվում՝ ըստ կրթամասերի) և նվազագույն ամփոփիչ միջին որակական գնահատական, որի համար նվազագույն շեմ կարող է սահմանվել նաև մասնագիտական կրթամասի համար):

7. ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

38. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա:

39. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

1) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),

2) ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագիր) համար սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները:

40. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը:

41. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան: Փորձաշրջանի տևողությունը սահմանում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը:

42. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում

դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ: Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով:

8. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԿՐԿՆՈՒՄԸ

43. Տվյալ կրթական ծրագրի համար սահմանված կիսամյակային միջին որակական գնահատականի նվազագույն շեմն ապահովելու նպատակով ուսանողը համապատասխան ուսումնական ստորաբաժանման թույլտվությամբ կարող է կրկնել դասընթացը, սակայն տվյալ դասընթացին հատկացված կրեդիտներից ավել կրեդիտներ ուսանողին չեն տրվում, իսկ միջին որակական գնահատականում հաշվի է առնվում այդ դասընթացի վերջին գնահատման արդյունքը,

44. Հաջողությամբ հանձնած դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ուսանողի ցուցաբերած առաջադիմությունից կամ ուսման ընդհատման հանգամանքից:

45. Կրեդիտների կուտակման արդյունքում վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

9. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

46. Կրեդիտները նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական մեկ հաստատությունից մյուսը փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու ուսումնական հաստատությունների համաձայնությամբ՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

47. Կրեդիտները փոխանցելի են ուսումնական ծրագրերի և մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև, եթե դրանց վերջնական կրթական արդյունքները համադրելի են:

48. Կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող և բարձրագույն ուսումնական հաստատությունները այդ մասին կնքում են համապատասխան երկկողմ համաձայնագիր:

10. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ

49. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում շրջանավարտների աստիճանաշնորհումը կատարվում է ծրագրի ավարտական պահանջների կատարման ամփոփումից հետո, որը կատարվում է ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցի և համապատասխան ուսումնական ստորաբաժանման մասնակցությամբ:

50. Ավարտական ամփոփման ընթացքում ստուգվում են ուսանողի ակադեմիական տվյալների (կուտակած կրեդիտների քանակի ու բովանդակության, ամփոփիչ միջին որակական գնահատականի և ամփոփիչ ատեստավորման) համապատասխանությունը մասնագիտության ավարտական պահանջներին:

11. ՈՒՍԱՆՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

51. Ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման կարգին:

52. Կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները:

53. Կանոնավոր հաճախել բոլոր դասընթացներին:

12. ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

54. Ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության կողմից առաջադրվող ոչ պարտադիր դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան:

55. Միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում կատարելու ընտրություն՝ ելնելով դասախոսի նախապատվությունից և/կամ դասընթացի կայացման ժամանակացույցից:

56. Փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում (ներառյալ՝ օտարերկրյա):

57. Հիմնավորված կերպով դիմելու դեպքում ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ կազմված ուսումնառության լրիվ կամ որևէ շրջանի համար:

13. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

58. Ուսումնական ծրագրում և դասընթացների տեղեկագրում դասընթացին հատկացված կրեդիտների հետ մեկտեղ նշվում է նաև շաբաթական լսարանային ժամաքանակն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ և այլն):

59. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերի վերլուծության և առանձին դասընթացներին ուսանողների գրանցման տարիների ընթացքում կուտակված վիճակագրական տվյալների հիման վրա նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը կազմում է ինչպես հաջորդ ուստարվա ուսումնական բեռնվածությունը, այնպես էլ դասընթացների ու քննությունների ժամանակացույց: